

**Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության
հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիմնական
առանձնահատկությունները**

ՀՀ ֆինանսների նախարարի 1999 թ. հուլիսի 19-ի թիվ 263 հրամանով հաստատվել է կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը (այսուհետև նոր հաշվային պլան):

Նոր հաշվային պլանի մշակման և ընդունման անհրաժեշտությունը կայանում էր նրանում, որ կենտրոնացված պլանային տնտեսությունից շուկայականին անցմանը կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի երևույթներ ու գործառնություններ, որոնք հնարավոր չէր արտացոլել մինչև այժմ գործող հաշվային պլանի (այսուհետև հին հաշվային պլան) միջոցով: Հին և նոր հաշվային պլանների սկզբունքային տարբերության հիմքում ընկած են ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների տարանջատումը: Նոր հաշվային պլանը հնարավորություն է տալիս արտացոլելու ՀՀՀՀՄ (Հայաստանի հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ) բացահայտման պահանջները, որոնց նպատակն է ապահովել կազմակերպությունների ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին անկողմնակալ տեղեկատվությամբ, ինչպես նաև ֆինանսական և հարկային հաշվառումների տարանջատումն ու շեղումների արտացոլումը:

Նոր հաշվային պլանը կազմված է ըստ տնտեսական բովանդակության դասակարգված հաշիվներից և ի տարբերություն հին հաշվային պլանի, ներառում է հաշիվների դասեր, հաշիվների խմբեր, առաջին կարգի հաշիվներ (սինթետիկ հաշիվներ) և երկրորդ կարգի հաշիվներ (ենթահաշիվներ): Կազմակերպությունները կարող են անհրաժեշտության դեպքում հաշվային պլանում ավելացնել լրացուցիչ առաջին և երկրորդ կարգի հաշիվներ, օգտագործելով հաշիվների ազատ ծածկագրերը, ինչպես նաև փոփոխել երկրորդ կարգի հաշիվները, այդ մասին բացահայտելով իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Նոր հաշվային պլանում տարանջատված են ֆինանսական հաշվառման (1-7 դասեր), կառավարչական հաշվառման (8-րդ դաս) և արտահաշվեկշռային (9-րդ դաս) հաշիվները:

Ֆինանսական հաշվառման հաշիվները բաժանվում են հաշվեկշռային հաշիվների (1-5 դասեր), որոնք նախատեսված են ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվառման համար և գործունեության արդյունքների հաշիվների (6-7 դասեր), որոնք նախատեսված են եկամուտների և ծախսերի հաշվառման համար:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը տրված է ըստ դրանց շրջանառելիության՝ ոչ ընթացիկի և ընթացիկի, համաձայն ՀՀՀՀՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի:

Նոր հաշվային պլանում սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող հիմնական միջոցների գծով բացված են երեք առաջին կարգի հաշիվներ՝ 111 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ», 113 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ» և 115 «Հողամասեր»: Հողամասերը չեն մաշվում, որովհետև դրանց օգտակար ծառայությունը անսահմանափակ է, իսկ ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների գծով դադարեցվում է մաշվածության հաշվարկումը, մինչև դրանց նորից շահագործման հանձնումը: Վերջինիս գծով կուտակված մաշվածությունն արտացոլվում է 114 «Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների մաշվածություն» առաջին կարգի հաշվում:

Համաձայն ՀՀՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի, բնական ռեսուրսները հիմնական միջոց չեն համարվում, այդ իսկ պատճառով էլ և ի տարբերություն հին հաշվային պլանի, նոր հաշվային պլանում բնական ռեսուրսների հաշվառման նպատակով բացված են առաջին կարգի հաշիվներ՝ 116 «Բնական ռեսուրսներ» և 117 «Բնական ռեսուրսների սպառում»:

118 «Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ» առաջին կարգի հաշվում հաշվառվում են տեղակայման ենթակա սարքավորումները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում հիմնական միջոցների կառուցման (ստեղծման) ու հետագա կապիտալացումների գծով կուտակված ծախսումները, իսկ ծախսումների հավաքագրումը կատարվում է 8-րդ դասով: Հին հաշվային պլանում այն արտացոլվում է մեկ հաշվով:

Համաձայն ՀՀՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ», ՀՀՀՀՄ 36 «Արժեզրկումից կորուստներ» և ՀՀՀՀՄ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտների, ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկումներին վերաբերվող տեղեկատվության ընդհանրացման համար բացված են առաջին կարգի հաշիվներ՝ նյութական ակտիվների գծով՝ 122 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկումներից կորուստներ» և ոչ նյութական ակտիվների գծով՝ 136 «Ոչ նյութական ակտիվների արժեզրկումներից կորուստներ»:

13 «Ոչ նյութական ակտիվներ» խմբում հաշվառվում են նաև ՀՀՀՀՄ 9 «Հետազոտության և զարգացման ծախսումներ» ստանդարտի համաձայն անավարտ և ակտիվ ճանաչված զարգացման ծախսումները:

Հին և նոր հաշվային պլանների արձատական տարբերություններից է ֆինանսական ներդրումների հաշվառման մոտեցումները: Նոր հաշվային պլանը առավելագույնս հնարավորություն է տալիս արտացոլելու ֆինանսական շուկայի բոլոր տարրերի բացահայտմանը՝ համաձայն ՀՀՀՀՄ 25 «Ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՄ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում

ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում» և ՀՀՀՀՍ 31 «Համատեղ ձեռնարկումներում մասնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում» ստանդարտների:

Տարբերակում են ներդրումներ կանոնադրական կապիտալում, պարտքային արժեթղթերում, ինչպես նաև տրամադրված փոխատվություններ: Կանոնադրական կապիտալում ներդրումները իրենց հերթին դասակարգվում են ներդրումներ կապակցված կողմերում (կողմի կապակցված լինելը որոշվում է համաձայն ՀՀՀՀՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի) և չկապակցված կողմերում:

Կապակցված կողմերի կանոնադրական կապիտալում ոչ ընթացիկ ներդրումները հաշվառվում են հիմնականում «բաժնեմասնակցության մեթոդով» և արտացոլվում 141 «Ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կողմերի կանոնադրական կապիտալում» առաջին կարգի հաշվում: Վերոհիշյալ ստանդարտներում նկարագրվում են դեպքեր, երբ այդպիսի ներդրումները կարող են հաշվառվել նաև այլ մեթոդներով:

Չկապակցված կողմերի կանոնադրական կապիտալում ոչ ընթացիկ ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով, վերագնահատված արժեքով կամ շուկայական (հեշտ իրացվելի) բաժնեմասնակցության արժեթղթերի դեպքում՝ պորտֆելի հիմունքով և արտացոլվում 1421 «Ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կողմերի կանոնադրական կապիտալում» երկրորդ կարգի և 144 «Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազում» առաջին կարգի հաշիվներով:

142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ» առաջին կարգի հաշվի 1422 «Ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կողմերի պարտքային արժեթղթերում» և 1423 «Ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կողմերի պարտքային արժեթղթերում» երկրորդ կարգի հաշիվներում արտացոլվում են պարտքային արժեթղթերում ոչ ընթացիկ ներդրումները: Վերջինիս գծով ձեռք բերման և անվանական (մարման) արժեքի տարբերությունն արտացոլվում է 143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն» առաջին կարգի հաշվում, որն ամորտիզացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ ճանաչվելով որպես եկամուտ կամ ծախս:

Ընթացիկ ներդրումների հաշվառումն իրականացվում է 24 «Ընթացիկ ֆինանսական ներդրումներ» խմբի հաշիվներով: Հարկ է նշել, որ նոր հաշվային պլանում ակտիվապասիվային հաշիվները երկուսն են և որոնք վերաբերվում են ֆինանսական ներդրումների հաշվառմանը (143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն» և 242 «Ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն»):

Նոր հաշվային պլանի առանձնահատկություններից է նաև ֆինանսական և հարկային հաշվառումների միջև եղած շեղումների հետևանքով հետաձգված հարկային

ակտիվների և պարտավորությունների արտացոլումը համաձայն ՀՀՀՄ 12 «Շահութահարկ» ստանդարտի: Այդ հաշվառումն իրականացնելու նպատակով բացված են 152 «Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով» և 422 «Ոչ ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով», իսկ հարկերի վճարման ժամկետի հետաձգման հաշվառման նպատակով՝ 262 «Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով» և 542 «Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով» առաջին կարգի հաշիվները:

ՀՀՀՄ 17 «Վարձակալություն» ստանդարտը սահմանում է ֆինանսական վարձակալության նկատմամբ կիրառվող բացահայտումները: Մասնավորապես վարձատուի ֆինանսական հաշվետվություններում՝ վարձակալությունում համախառն ներդրումները (145 «Երկարաժամկետ դեբիտորական պարտք ֆինանսական վարձակալության գծով») և չվաստակած ֆինանսական եկամուտը (146 «Չվաստակած ֆինանսական եկամուտ»): Հաշիվներից առաջինն ակտիվային է, իսկ երկրորդը՝ պասիվային, կարգավորող: Այս հաշիվների միջև եղած տարբերությունն իրենից ներկայացնում է վարձակալությունում գուտ ներդրումների գումարը:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հետ կապված տեղեկատվության ընդհանրացման համար վարձակալը բացում է ակտիվների և նրանց մաշվածության հաշվառման նպատակով՝ 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» և 121 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն», իսկ պարտավորության՝ 413 «Երկարաժամկետ պարտավորություններ ֆինանսական վարձակալության գծով» և 414 «Ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսեր» առաջին կարգի հաշիվները:

Ֆինանսական վարձակալության գծով պարտքի և պարտավորության ոչ ընթացիկից ընթացիկ մաս փոխադրվող գումարները հաշվառվում են համապատասխանաբար 2313 «Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ դեբիտորական պարտքի կարճաժամկետ մաս» և 5322 «Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների կարճաժամկետ մաս» երկրորդ կարգի հաշիվներով:

Նոր հաշվային պլանում տրված կանխավճարների գծով բացվում են երկու առաջին կարգի հաշիվներ՝ 153 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերելու համար» և 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»: Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման համար տրված կանխավճարն անկախ մարման ժամկետներից՝ ճանաչվում է ոչ ընթացիկ ակտիվ, համաձայն ՀՀՀՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի:

Ըստ ՀՀՀՄ 2 «Պաշարներ» ստանդարտի, արագամաշ առարկաներին վերաբերվում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարի՝ անկախ դրանց արժեքից: Այդ իսկ պատճառով, հին հաշվային պլանի փոքրարժեք և

արագամաշ առարկաների մի մասը (որոնց ծառայության ժամկետը գերազանցում է մեկ տարի) դասակարգվում են որպես հիմնական միջոց, մյուս մասը՝ արագամաշ առարկաներ, ընդ որում եթե վերջիններս գտնվում են պահեստում, ապա հաշվառվում են 213 «Արագամաշ առարկաներ պահեստում» առաջին կարգի հաշվով և եթե շահագործման մեջ՝ ճանաչվում են որպես ծախս:

Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված, ինչպես նաև բեռնված արտադրանքի և ապրանքների գծով բացվում են համապատասխան երկրորդ կարգի հաշիվներ 215 «Արտադրանք» և 216 «Ապրանքներ» առաջին կարգի հաշիվներում: Հստակեցվել է մանրածախ առևտրում գտնվող ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերության հաշվառումը (այն կիրառվում է միայն նպատակահարմարությունից ելնելով): 217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն» առաջին կարգի կարգավորող հաշվում բացված են երկրորդ կարգի հաշիվներ ոչ միայն առևտրական հավելագնի գծով (2171 «Առևտրական հավելագին»), այլև անուղղակի հարկերի գծով (2172 «Ավելացված արժեքի հարկ» և 2173 «Ակցիզային հարկ»): Վերջինս հին հաշվային պլանում բացակայում էր:

Համաձայն ՀՀՀՀՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի մասնակի դուրս գրումը՝ իրացման գուտ արժեքի մակարդակի իջեցնելու պրակտիկական համապատասխանում է այն տեսակետին, որ ակտիվները չպետք է արտացոլվեն ավելի բարձր գումարով, քան ակնկալվում է, որ պիտի ստացվի նրանց վաճառքից կամ օգտագործումից: Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների: Այդ իջեցումների հաշվառման նպատակով նոր հաշվային պլանում բացված է 218 «Պաշարների արժեքի նվազում» առաջին կարգի կարգավորող հաշիվը:

Առևտրային դեբիտորական պարտքերը, համաձայն ՀՀՀՀՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի, ճանաչվում են ընթացիկ ակտիվներ, նույնիսկ երբ չի ակնկալվում դրանց իրացումը հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում: Այդ իսկ պահառով էլ այդպիսիք արտացոլող հաշիվները բացված են միայն 22-23 «Գործառնական և այլ դեբիտորական պարտքեր» խմբում:

Հաշվային պլանի բոլոր հաշիվները, բացառությամբ երկու ակտիվապասիվային հաշիվների, կարող են ունենալ միայն դեբետային կամ կրեդիտային մնացորդներ: Այդ իսկ պատճառով էլ հին հաշվային պլանի մի շարք հաշիվներ նոր հաշվային պլանում կարող են ունենալ համարժեք երկու հաշիվներ: Գրանք հիմնականում ընդգրկված են 22-23 «Գործառնական և այլ դեբիտորական պարտքեր» և 52-53 «Գործառնական և այլ ընթացիկ կրեդիտորական պարտքեր» խմբերում: Այդպիսիք են բյուջեի, պարտադիր սոցիալական

ապահովագրության և ապահովության, անձնակազմի գծով հաշվարկներին վերաբերվող հաշիվները:

Ավելացված արժեքի հարկի հաշվառման նպատակով բացված են երեք երկրորդ կարգի հաշիվներ՝ 2252 «Ընթացիկ դեբիտորական պարտք բյուջեի գծով՝ ավելացված արժեքի հարկի գծով», 2261 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա ավելացված արժեքի հարկ» և 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին՝ ավելացված արժեքի հարկի գծով», որը հնարավորություն է տալիս առանձին հաշվառելու համապատասխանաբար ստացված հարկային հաշիվներում առանձնացված հաշվանցման (փոխհատուցման) ենթակա, ինչպես նաև բյուջե վճարված ԱԱՀ և առաջացած հարկային պարտավորությունը:

25 «Դրամական միջոցներ» խմբում բացվել են երկրորդ կարգի հաշիվներ սառեցված գումարների գծով:

Նոր հաշվային պլանում, համաձայն ՀՀՀՀՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կապակցված կողմերի փոխհարաբերությունների հաշվառման նպատակով բացված են մի շարք առաջին կարգի հաշիվներ՝ (141 «Ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կողմերի կանոնադրական կապիտալում», 142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ», 221 «Առևտրական դեբիտորական պարտքեր չկապակցված կողմերի գծով», 222 «Առևտրական դեբիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով», 521 «Առևտրական կրեդիտորական պարտքեր չկապակցված կողմերին», 522 «Առևտրական կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերին»): Այդ տեղեկատվությունն օգտագործվում է հիմնականում համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ:

Դաս 3 «Սեփական կապիտալ»-ում ներառված են նաև 312 «Չվճարված կապիտալ» և 313 «Հետ գնված կապիտալ» առաջին կարգի հաշիվները, որոնք հանդիսանում են կարգավորող 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ» հաշվին: Հին հաշվային պլանում այն հաշվառվում էր դրամական միջոցների (հաշիվ 56) և հաշվարկների (հաշիվ 75) բաժիններում:

321 «Վերագնահատումից տարբերություններ» առաջին կարգի հաշվում արտացոլվում են ոչ միայն հիմնական միջոցների (ինչպես հին հաշվային պլանում), այլև ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների վերագնահատումից առաջացած արժեքի աճը: Բացված է նաև 322 «Չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից» առաջին կարգի հաշիվը, որում արտացոլվում է հեշտ իրացվելի (շուկայական) բաժնեմասնակցության արժեթղթերի պորտֆելի հիմունքով որոշված շուկայական արժեքի և ինքնարժեքի տարբերությունը:

342 «Նախորդ տարիներ ֆինանսական արդյունքների ճշգրտում» առաջին կարգի հաշվում համաձայն ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս,

Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի հիմնական մոտեցման, հաշվառվում է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերվող էական սխալների գումարը՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը:

344 «Կանխավճար շահաբաժինների գծով» առաջին կարգի հաշվում հաշվառվում են հաշվետու տարում որպես կանխավճար տրված շահաբաժինների գումարը, որոնք հետագայում մարվում են հայտարարված շահաբաժիններով:

4211 «Ակտիվներին վերաբերվող շնորհներ» երկրորդ կարգի հաշվում հաշվառվում են համաձայն ՀՀՀՀՍ 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտի՝ ակտիվներին վերաբերվող շնորհների մասով հետաձգված եկամուտները, իսկ 4222 «Բացասական գուղվիլ» երկրորդ կարգի հաշվում՝ բացասական գուղվիլը, որն հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է որպես ակտիվներից հանում մույն դասակարգմամբ, ինչպես գուղվիլը, այսինքն ոչ նյութական ակտիվներում՝ բացասական նշանով:

51 «Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ» խմբում առաջին կարգի հաշիվներով (512 և 514) ցույց է տրվում երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մասը:

531 «Կարճաժամկետ պարտավորություններ հաշվեգրված տոկոսների գծով» առաջին կարգի հաշվում վարկերից և փոխառություններից առանձնացված կերպով (ի տարբերություն հին հաշվային պլանի) հաշվառվում են դրանց գծով հաշվեգրված տոկոսները:

Նոր մոտեցում է դրսևորված գործունեության արդյունքները հաշվառող հաշիվների նկատմամբ: Նախ, եկամուտները և ծախսերը հաշվառվում են առանձին դասերում (դաս 6 «Եկամուտներ» և դաս 7 «Ծախսեր»), միմյանց միջև չի թույլատրվում հաշվանցում և եկամուտների կազմում չեն ներառվում երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները (անողակի հարկերը և այլն): Առաջին կարգի հաշիվները կազմված են այնպես, որպեսզի առավել նպատակահարմար և արդյունավետ լինի տեղեկատվության լրացումը ֆինանսական հաշվետվություններում: Այս դասերի գուտ շրջանառությունները տեղափոխվում են 331 «Ֆինանսական արդյունք» առաջին կարգի հաշիվ:

624 «Գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից (օտարումից) եկամուտ» և 724 «Գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքի (օտարման) ծախսեր» առաջին կարգի հաշիվներում արտացոլվում են առանձին, նշանակալի ուղղություն հանդիսացող գործունեությունների ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից (օտարումից) եկամուտները և ծախսերը:

628 «Կապակցված կազմակերպությունների շահույթի բաժնեմասը՝ ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս» և 727 «Կապակցված

կազմակերպությունների վնասի բաժնեմասը՝ ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս» առաջին կարգի հաշիվներում արտացոլվում են կապակցված կողմերի կանոնադրական կապիտալում «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների գծով ներդրման օբյեկտի գուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխություններից՝ եկամուտը կամ ծախսը:

641 «Հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիների եկամուտներ» և 741 «Հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարիների ծախսեր» առաջին կարգի հաշիվներում արտացոլվում են ՀՀՀՀՄ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի թույլատրելի այլընտրանքային մոտեցման համաձայն, նախորդ ժամանակաշրջաններին վերաբերվող եկամուտները և ծախսերը: Համաձայն վերը նշված ստանդարտի պահանջների, արտաստվոր հողվածների (ակտիվների բռնագրավում, երկրաշարժ կամ այլ բնական աղետներ) բնույթն ու գումարը առանձին բացահայտելու նպատակով բացվում են նաև 631 «Արտաստվոր եկամուտներ» և 731 «Արտաստվոր ծախսեր» առաջին կարգի հաշիվները:

Դաս 8 «Կառավարչական հաշվառման հաշիվներ» նախատեսված է արտադրական ծախսումների և արտադրանքի (ծառայության) ինքնարժեքի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք օգտագործվում են կազմակերպության ներսում՝ կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով: Այս դասում բացված են նաև ոչ ընթացիկ նյութական ակտիվների կառուցման (ստեղծման) ու հետագոտության և զարգացման ծախսումները հաշվառող առաջին կարգի հաշիվներ (814 և 815), որոնց մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում տեղափոխվում է դաս 2:

Դաս 9 «Արտահաշվեկշռային հաշիվներ» հին հաշվային պլանի հետ համեմատած լրացված է նոր առաջին կարգի հաշիվներով՝ 931 «Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ», 932 «Հանձնուրդի (կոնսիսիայի) և հանձնարարության (կոնսիգնացիայի) պայմանագրերով ընդունված միջոցներ», 945 «Չհատուցված հարկային վնաս», 952 «Պարբերական և մասնագիտական գրականություն» և 953 «Շահագործման մեջ գտնվող արագամաշ առարկաներ»:

Թաթուլ Մովսիսյան
«Էկոնոմիկա և իրավունք» 11.1999